

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, չորս ամսանը 5 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Պարագրուիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ:

Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարտունակ խելացի կազմակերպութեամբ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գինեգործական գրաւորոյ Անդրկովկասում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին տեսութիւն. Արտաքին լուրեր. Հեռագրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԱՔԱՌՈՒՄ ԽԵԼԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Այսօր մենք տպում ենք Թաւրիզի մի հեռագիր, որի մէջ ասված է, որ Ասորի պատմական խօսքերը չեն կայ: Դա հանգամանակով մի հեռագիր է: Իսկ միւս կողմից հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում երեւացած խօսքերն ոչ միայն չեն թուլացել, այլ և սպառնալիս են ծաւալել և ստացել:

Այդտեղ կայ և առ այժմ մեզինք հեռու է, բայց աչքի առաջ պէտք է ունենալ փաստերը իր ամբողջ մեծութեամբ: Մենք կարող ենք յայտնող դուրս գալ աղէտի դէմ մաքառման կռիւի մէջ, եթէ խելացի միջոցներ ձեռք կաշնենք նրա տարածվելու և ազդելու ճանապարհները փակելու համար:

Ոչ նուազեցնել և ոչ չափազանցնել պէտք է աղէտը, այլ նրան ճանաչել, նրա զրուծիւնը ճիշտ ուսումնասիրել և նրա դէմ մաքառում կազմակերպել: Մեր վարչական մարմինները արդէն ձեռնարկել են մի շարք միջոցներ՝ բարոյեցնելու մեր քաղաքները և գիւղերը առողջապահական վիճակը, բայց գործին աջող ընթացք տալու համար անհրաժեշտ է, որ ինքը հասարակութիւնը, ինքը ազգայնականութիւնը, գիտակցաբար վերաբերվի իրան շրջապատող պայմաններին և եռանդուն ու խելացի կազմակերպութեամբ ստեղծել այնպիսի առողջապահական դրութիւն, որ ինքն ինքեան չքացնէ վարակիչ հիւանդութիւնների տարածումը մեր երկրում:

Տանկերի տարի սրանից առաջ երեւցած խօսքերն ցոյց տուեց, որ մեր երկրի այն մասերում, ուր նպաստաւոր էին առողջապահական պայմանները և կազմակերպված էին եռանդուն գործող առողջապահիկ խմբեր, խօսքերն շատ քիչ դոնէր տարաւ և ընդհանրապէս մահացութիւնը պակասել էր: Եւ ընդհանրապէս այնպիսի, ուր բացակայ էր մաքուր ջուրը, և անապատ էին առողջապահական պայմանները, հիւանդութիւնը դարձաւ իսկապէս մի ժողովրդական մեծ դժբաղդութիւն, որ խելացի ժողովրդից մեծ մասամբ նրա աշխատող ձեռքերը:

Յայտնել կարելի է աղէտը, եթէ մենք կարգին կը կազմակերպվենք նրա դէմ մաքառելու համար: Չը պէտք է վհատվել չը պէտք է վախենալ, այլ խելացի կերպով մաքառել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԱՆԳՐԱՎՈԿԱՍՈՒՄ (Նամակ Դերբէնից)

Այս տարի, սեպտեմբեր ամսից, Դերբէնում բացվում է գինեգործական ուսումնարան, որի պահանջը վաղուց զգացվում էր մեզ մօտ: Դերբէնում իբրեւ Դադաստանի գինեգործութեան կենտրոնը՝ արդէն գրաւել է Ռուսաստանի ֆերմաների ուղարկութիւնը և ամենայն տարեւ մեծ քանակութեամբ գինիներ ուղարկվում են Ռուսաստանի զանազան կողմերը: Գինը ընդհանրապէս, տարեց տարեւ բարձրանում են, միայն այս տարեւ այնքան աջող չանցան դերբէնացիներին համար: Գինին, որ ծախվում էր վերջօրէ 1 ռ. 70 կօպ., իջաւ մինչև 1 ռ. 10 կօպ.:

Բաւականաչափ պահանսներ չունենալով,

այգետեղերը ստիպված են գինին քամելուց խելոյն վաճառել: Այդ պատճառով գինին էլ այդ աստիճան փոփոխակի են:

Այգետեղերը մեծամասնութիւնը, ամբողջովին գործին նուիրված չը լինելով, այնքան ուշադրութիւն չեն դարձնում իր այգու բարեւոքման մասին: Այգեգործութիւնը մի կողմից պարագլուխը է դառնում տեղացիների համար, չը նայած, որ շատերը ունեն մօտ 10—15 դեմետրին այգի, որ տալիս է ամենաբարձր 20—25 % զուտ արդիւնք:

Այս բանը աչքի առաջ ունենալով, հասկանալի է, որ անհրաժեշտ է տեղային գինեգործութիւնը աւելի առաջ տանելու համար ունենալ կրթված այգետեղ, նախապատրաստված և աւելի հասկացող մշակներ:

Մենք կարծում ենք, որ այս բոլորին, գոնէ մասամբ, կաշկեղէն մեր նոր բացվող գինեգործական ուսումնարանը:

Բացի գինեգործութիւնից, տեղային խաղողը, մասնաւորապէս «Բիշրաբա» և «Աղաղայի», ուղարկվում է մեծ քանակութեամբ Ռուսաստանի մայրաքաղաքները, համարում է անգամ մինչև Սիբիր—2 ռ.—2 ռ. 40 կօպ. պուլը ֆրանկո Դերբէնում: Այգեգործութեան այս ճիւղը, նայած վերջին տարիներին, նոյնպէս լաւ ապագայ ունի:

Խաղողի բերքը այս տարեւ բաւականին լաւ է: Սունկային հիւանդութիւնները քիչ են տարածված: Աւելի մեծ վնասներ է տալիս այգիներին Ino ampelophaga անուանված թիթեռը, որ վերջին տարիներին արագ քայլերով է աճում այստեղ:

Ս. Բաշինջաղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թաւրիզից մեզ հեռագրում են. «Ոչ թէ Թաւրիզում, այլ և Ասորիպատկանում խօսքերն ոչ մի դէպք տեղի չեն ունեցել»:

Գ. ան ձա կ ի նախագահատի օգնական Անդրէիկի սպանութեան մասին լուր բերեց հեռագրական գործակալութիւնը. մասն ու խոշոր հեռագիրներ ունեն և «Կաւ.», «Նով. Օբ.», «Դ. Ա.» տեղական լրագրիչները: Նոյն դէպքի մասին Հա Ջի Բէ Ջի գ ի ց մեզ հեռագրում են. «Յուլիսի 4-ին, երեկոյեան ժամը 6 և 45 րօպէին, Փօրէի հիւանդոցի մօտ թեք խնուղու վրա՝ ատրճանակի հարուածներով սպանվեց նախագահատի օգնական Անդրէիկը: Մահը վարկեան էր՝ առատ արիւնհոսութեան պատճառով, որն առաջացել էր ձախ անրակի տակի զարկերակի պատուիրուց և ներքին նախասնայի փշրվելուց: Հանգուցեալը վերադառնում էր Ներքին Հայրէջից՝ առանց ուղեկից ծառայի: Դիակախութիւնը պատահեց հանդիպած պաշտօնեաների հետ ունեցած խօսակցութիւնից 2 րօպէ յետոյ: Չարագործը 6 հաւրուած տուեց թիկունքին և թեք ճանապարհով անյայտացաւ անտառում: Այդ առիթով «Նով. Օբ.» լրագրիչը ասում է, որ սպանութիւնից անմիջապէս յետոյ տեղային պրեստաւ՝ ոստիկանութեան և ստրաժնիկների խմբով ընկել է սպանիչի ետևից: Թէև նա դեռ ձեռքաւորված չէ, բայց անունն արդէն յայտնի է»:

Թիֆլիսում, պ. Մուրադխոյի թատրոնում հայ թատերասերների մշտական խումբը ամսին 4-ին ներկայացրեց «Հոգով աղբատներ» պիեսը և «Օսկար Պետրովիչը դժոխքում» վոդևիլը: Պիեսը թէ լուրջանկութեան և թէ լիզուի կողմից բաւական անմատչելի է ժողովրդական ներկայացումների համար, ինչպէս այդ երեւց ներկայ դէպքում: Գլխաւոր միտքը մեր կարծիքով անհասկանալի մնաց հասարակ դասի համար հէնց գլխաւորապէս լիզուի խթնութեան պատճառով: Լիզուն պէտք է ժողովրդը դաղանացնել, եթէ կամենում ենք ժողովրդին օգտաւէտ լինել: Պիեսի չափազանց բարձր ոճի դրման մի դիտմանն էր ներկայացնում պ. Մուրադխոյի լիզուն Սեպուրիչի դերում, որը կատարվեց տեղական ձեռքով, ոճով և արտա-

սանութիւնով: Մեր կարծիքով լիզուի կողմից այդ դերը բացառութիւն չը պիտի կազմէր: Պիեսի գլխաւոր հերոսների դերերը տիկին Վերթինէն և պ. Վանդիլը աշողութեամբ կատարեցին: Վատ չէին նմանապէս պ. պ. Դաւանտիւն և Սաֆարեան: Հասարակութեան կենդանութիւնը ներշնչեց վոդևիլը, որի մէջ Օսկար Պետրովիչի դերը պ. Մարեան աջող տաբաւ: Ընդհանուր առումը ներկայացումը աշողված չէ կարելի համարել: Ներկայացումը վերջացաւ գիշերվայ ժամը 2-ին: Դա չափազանց ուշ է: Դեֆիցիտ ստացվեց մօտաւորապէս 18 ռուբլի:

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ամսին 5-ի նիստում վճռվեցին հետեւեալ հարցերը. 1) Վալէ կոչված տեղը քաղաքի հետ միացնելու հարցը ուսումնասիրելու համար ընտրել մի յանձնաժողով: 2) Նաւթուղի նաւթաբեր հողերը կապալով տալու հարցը բնակչու համար նոյնպէս ընտրել յանձնաժողով և թէ մշակել պայմանաւորվելու կէտերը և 3) յարգել տիկին Շամարեանի խնդրերը, թոյլ տալով նրան հանգուցեալ ամուսնու կտակած 1874 ըստ ստժէն հողը, որը գտնվում է Աստրախանում և որը Աստրախանի քաղաքային գնահատիչ յանձնաժողովը գնահատել է 2811 ռուբլի, ծախել 12,000 ռուբլով, համաձայն իր ներկայացրած խնդրերի:

Թիֆլիսի Դիլուրէ քաղաքամասի բժիշկը դիմելով սանիտարական տեսչին, խնդրում է քաղաքաքային վարչութիւնից պարտաւորեցնել Անտիմ ընկերութեանը ասֆալտով ծածկելու Մուշապիլի մօտ փողոցի այն մասը, ուր կանգնում են ձիաբաշիկ վագոնները: Այդ միջոցով յոյս կայ վերացնելու այն զարգանտութիւնը, որը առաջ է գալիս ձիերի անմաքրութիւններից: Այդ զարգանտութիւնը չէ վերանում չը նայած, որ օրէնք երկու անգամ լուսնում են այդ տեղերը. գետինը տարիներ ընթացքում ծծված է աղբով: Մինչդեռ ասֆալտով ծածկված դէպքում, կարելի է լուսնալով անցկացնել հողը:

Այն յանձնաժողովը, որը զբաղված է կատարելագործված սպանդանոցի կառուցումով իր ամսի 2-ի նիստում լսելով ինժեներ Սալապազանովի ծրագիրը՝ ընդհանուր առմամբ ընդունեց նրան, միայն մանրամասնութիւնը պարզելու համար յանձնեց ինժեներ Գրիգորեանին և բժ. Ստեփանեանցին, պայման դնելով, որ նրանք իրանց կարծիքը ներկայացնեն հինգշաբթի, ամսին 8-ին:

«Նով.» լրագրիչը հաղորդում է, որ Պետերբուրգի համալսարանի ուսանողները կազմել են իրանց ֆիզիքական զարգացման համար մի ընկերութիւն, որի նպատակն է ամառային ամիսներում Պետերբուրգում մնացող ուսանողների ֆիզիքական առողջութիւնը զարգացնելու համար հող տանել: Այդ ընկերութեան հիմնադիրները գիտաւորութիւն ունեն ամեն կերակի կազմակերպել մանրիկ շրջապատութիւններ կամ ընկուրսիաներ քաղաքից դուրս: Կազմելով միաժամանակ և զանազան խաղեր: Առաջին դրօշմները կատարվեց անցեալ կիրակի և գրաւել էր 50-ից աւելի ուսանողներ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Երէկ, ամսին 1-ին, Ն. Սանդախտիանի դահլիճում «Մօսկվայի օպերային արտիստ» Ա. Կոտանեանը տուեց համբոյ, քաղկացած գլխաւորապէս ուսանողներ և երկու հայերէն երգերից: Հասարակութիւնը, ինչպէս և միշտ, շատապի էր լցնել դահլիճը ու այդպիսով ցոյց տալ իր յարգանքը արժանաւոր արտիստին: Համբոյը ընդհանրապէս աջող անցաւ: Մանաւանդ բուն ուղեւորութիւն առաջացրեց «Կուռնի» երգը, որ ստիպեցին կրկնել: Պ. Կոտանեանը bis-երէն երգեց ծրագրից դուրս ուսանողներ և հայերէն երգեր: Համբոյը վերջացաւ 11 ժամին և հասարակութիւնը զո՞ւ արտով հեռացաւ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՐԻՔԸ

Եապօնացիները աշխատում են առիթներ գրանցել Անգլիայի միջամտութեան համար: «Indep. Belge» լրագրիչը հեռագիրներ է տալիս Տօկիօյից, որոնցից երևում է, որ եապօնացիները ամեն կերպ աշխատում են պոլիթիկոս դաշնի, որոնց հիման վրա կարելի լինի ստիպել Անգլիային մասնակցել պատերազմին իբրեւ դաշնակից, դաշնակցական պայմանագրի դրութեամբ: «Եապօնական դիպլոմատիական գործակալները Եւրոպայում ստացել են պաշտօնական հրաման՝ հաւաքել բոլոր այն փաստերը, որոնցով Շապօնիան կարողանար օգտվել, իբրեւ ապացոյց, թէ Ֆրանսիան և Գերմանիան խախտել են չեզոքութիւնը: Այդ անգոյ խախտումով Շապօնիան մտադիր է օգուտ քաղել, որպէս զի ստիպէ Անգլիային՝ համեն իր օգնութեան, Լօնդոնի պայմանագրութեան (Կոնվենցիայի) պայմանների համաձայն» (НОВОСТИ)

Պատերազմը եւ անձեռներէ: Ընդհանուր կարծիք է, որ անձեռներէ շրջանը սկսվելով Մանչուրիայում, պատերազմական գործողութիւնները պէտք է ընդհատվեն, և յամենայն դէպս, վճռական գործողութիւններ տեղի չեն կարող ունենալ: Սակայն «New York Herald» լրագրիչը, որի թղթակիցը ամբողջ երկու տարի ապրել է Մանչուրիայում և Կորէայում, այն կարծիքն է յայտնում, թէ անձեռներէ այդ շրջաններում ամենին չեն կարող խափանել պատերազմական գործողութիւնները: «Լեաօդու նեան թերակղզու և հարաւային Մանչուրիայի շրջանները, որ բնակչու են պատերազմող կողմերը, բարձր դիրք ունեն և ջրի լաւ հոսանք, իսկ այդտեղ սպասված անձեռներէ աւելի սաստիկ չեն լինում այն անձեռներէից, որոնք գալիս են այդ ամսում Նիւ-Յօրքում և Ամերիկայի միւս միջին նահանգներում: Հիմք չը կայ ենթադրելու, որ անձեռներէ կանոնաւոր պայմաններում կարող են կանգնեցնել առօրինակ պատերազմական գործողութիւնները» (НОВОСТИ)

Կուրօկի բանակի առաւելագու շարժումը: Լօնդոնից հեռագրում են, թէ «Standard» լրագրի պատերազմական թղթակիցը, որ գտնվում է եապօնական գլխաւոր բանակատեղում, հեռագրում է, որ սկսվեց գինեքալ Կուրօկի բանակի արշաւողական շարժումը: Յունիսի 23-ի լրագրի տեղեկեցին սայլերի երկար շարքեր, բուսաւորված լապտերներով, որոնք անցնում էին Տաօի միջով: Առ այժմ դժուար է ասել, արդեօք այդ շարժումը ուղղված է դէպի Լեաօսիան, թէ դէպի Մուկդէն, թէ այն դիրքի վրա, ուր հանդիպում են երկու ճանապարհները—Սայչէնի և Լեաօսիան: Ճիշդ է միայն այն, որ եապօնական առանձին գործերը, որոնք այնքան երկար ժամանակ գործում էին ուրոյն ուրոյն, այժմ միացել են, բայց նրանց դրութիւնը աւելի վտանգաւոր է դարձել, որովհետեւ տեղը լուսնում է, իսկ ճակատը չափազանց ձգված: Եապօնական գլխաւոր բանակատեղում ամենից շատ թանգ է համարվում այժմ ամեն մի րօպէն, որովհետեւ երեք շաբաթից յետոյ անձեռներէ կը դարձնեն պատերազմի ամբողջ մանջուրական բնմը անանցանելի անագին ճահիճ և գործողութիւնները կը դադարեն: (Рыс. Вѣд.)

Պօրս-Արսուրեան կսկսաւ Պէկինից հեռագրում են «Times»-ին, որ նորից երկու է ծագել, թէ Պօրս-Արսուրեան էսկադրան, երբ ամեն բան կորած կը լինի, կաշխատէ իրան ձգել Կիւսո-Չաօ, որպէս զի չընկնէ եապօնացիներէ ձեռքը: (Т. А.)

Ինչ է Գոսիլ Եապօնացիներին Պօրս-Արսուրի մուսֆի փախուի: Պօրս-Արսուրի նաւահանգստի մուտքը փակելու ցանկութիւնը շատ թանգ է նստել եապօնացիների վրա: Եապօնական կառավարութիւնը, եապօնական մի լրագրի ասելով, վճարել է 1,190,800 իւն փող այն շոգենակերի տեղերին, որոնց խորատուգիւղով, փակել են մուտքը: Այդ գումարի մէջ չէ միտ-

